



ԲԱՂՄԱՎԵՊ

ԺԼ ՏԱՐԻ, ԹԻՒ 5

1860

ՄԱՅԻՍ 1

Առաքինի ու փաղաքակիրք պատաճի : (Տես Կրես 97)

ԻԲ

Կատարելագործել զկամս :

Դրջի անգամուն որ յանցանք մը ըրիր, ինչպահ քաշուեցար ու որչափ վերջէն խիզճդ զարկաւ : Ոմէ որ անհոգ եղար, վայ քեզի . ան առջի սխալմունքդ քեզի ուրիշ մըն ալընելու պատճառ եղաւ . փոխանակ զի թէ որ այսօր բարի գործք մը ընես ներսէդ կը մղուիս ուրիշ մըն ալընելու, և ան դժուարութիւնն որ այսօր կը զգաս բարի գործք մը ընելու ատեն, վաղը չես զգար՝ թէ որ այսօր ընես : Դասպէս նաև կամքն ալ կրթութեամբ կը լաւնայ . եթէ մէկը տեսնաս որ աղէկ է՝ կը վըստահիս իրեն, յուսալով որ միշտ անանկ աղէկ մարդ պիտի մնայ : Դաքինութիւնն ուրիշ բան չէ, եթէ ոչ վարժութիւն մը միշտ աղէկ ընելու . և ով որ ինքզինքը կը վարժեցընէ առաքինի ու քաղաքակիրթ է :

Ուրեմն ես ալ որ կ'ուզեմ առաքինի ու քաղաքակիրթ մարդ մը ըլլալ, ինչ պէտք է ընեմ :

Դհաւասիկ .

Ա. Օ գայարանքներդ սանձէ : Ո՞ւր մինը նիւթեղէն արարած մըն է, հողէն կ'ըլլայ ու հող պիտի դառնայ, և գուն ինչպէս կրնաս հաւանիլ որ ինքը հոգւոյն տիրէ որ անմահ է և պատկեր կ'ստուծոյ . ուրեմն միայն զգայարանաց հաջոյիցը համար ամենեին բան մը պէտք չէ որ ընես, հապա միշտ նայէ որ ըրածդ արդեօք պարտուցդ ու վախճանիդ համեմատ է թէ չէ : () գտակար է երբեմն օրինաւոր ու անմեղբաներէ ալ հրաժարիլ, որպէս զի առաքինութեան հրամայածին, այսինքն է, ըզմեզ զրկելու վարժինք, ինչ որ կարօտութեան մէջ կը ստիպուինք ընելու :

Բ. Ո՞իշտ զբաղմունք մը ունեցիր, վասն զի ծուլութեանը նայը է ախտից :

Գ. Բատ պատահման և ըստ հաջոյից մի գործեր, և ոչ իսկ առանց լաւ ուշ զնելու թէ արդեօք այս գործս արդար

ու աղեկ է թէ չէ . ուստի խղճմտան քիդ հարցուր թէ աս ըրածէս ինչ չետեանք կրնայ ելլալ թէ ինծի և թէ ուրիշներուն նկատմամբ . և թէ ինչ պէս կ'երևար քեզի թէ որ ուրիշ մը նոյն բանն ընէր , ու ինչ կ'ըլլար թէ որ ամէնքը նոյնպէս ընէին . Արևելքի իմաստուն թագաւորներէն մէկը լեցուն քսակով ոսկի պարգևեց այն իմաստունին՝ որ աս խրատը իրեն տուաւ թէ , բայ հը ամենեին մի չներ առանց նախ անոր հետեանէլ լսա հը հշտէլու :

Դ . Ատէպ քննէ զքեզ , և ոչ միայն պարզ ըրածդ , այլնաև ինչ պատճառաւ ընելդ ալ : Երեկ աղքատի մը ողորմութիւն տուիր , աղեկ է . բայց մոածելով որ աեսնողներ կան ու պիտի գովեն զքեզ :

Ե . Ունէ որ վրադ հակամիտութիւն մը կը տեսնաս դէպ 'ի առ չարն , ջանա հակառակ առաքինութիւններով անոր յաղթելու : Ալ տեսնաս որ հպարտ ես . խոնարհութէ վարժեցուր զքեզ . թէ որ ենթակայ ես շատ սուտ խօսելու , ջանա որ ամենէն չնշին բաններու մէջ ալ կարդէ դուրս անկեղծութիւն մը բանեցնես . մէկու մը դէմատելութիւն մը կը զգաս , քովը մօտեցիր , խօսէ ու բարեգործութիւն ըրէ : Ամենայն կերպով փախիր այն առիթներէն որ զքեզ աւելի դիւրաւ կրնան խոտորեցընել քու աղէկութենէդ . ու մի ըսեր թէ այս կամ այն հակամիտութեանս չեմ կը ընար յաղթել , աս փորձութեանս դէմ չեմ կը նար կենալ , չեմ կը նար իմին խառնուածքիս յաղթել : Ամէն բան կրնաս ընել , միայն թէ կամք ունենաս :

Զ . Ասա չնդ ում կենակցիս և ասացից նէ որդիս ու իցես : Առածիս իմաստն է թէ ինչպէս խօսակցութեան մէջ աւելի անոնց ոձն ու եղանակը կը բանեցնենք որոնց չետ որ ստէպ կը խօսակցինք , նոյնպէս նաև ուրիշ բաններու մէջն ալ այն մարդկանց կը հետեւինք որոնց չետ որ ստէպ կը կենակցինք : Աւրեմն գէշերէն փախիր , աղէկներուն 'ի իննդիր եղիր ու անոնց չետ կենակցէ ,

այս կերպով կրնաս ինքզինքդ ուղղել ու բարի անուն ստանալ . Կաւի կտոր մը գտայ որ անուշ կը հոտէր . արդեօք ուրիշ տեսակ կաւ մըն էր ասիկայ . չէ , այլ վարդենեաց մէջ կեցեր էր :

Է . Ացէկներուն օրինակը կը ստիպէ զքեզ որ իրենց նմանիս . հակառակէն փախիր : Խատիւ դատէ քու ըրածներդ , իսկ ուրիշներունը բարեսրտութեամբ :

Ը . Բարոյական գրեանք կարդա , և մասնաւորապէս երևելի մարդկանց վարքերն ու պատմութիւնները . մի և նոյն դիպուածներն անձիդ յարմարցուր՝ որով առաջուց փորձ կ'ըլլաս , ու իրենց ըրածներէն սովորէ վեհանձն գործոց վրայ զարմանալ , առաքինիները սիրել : Բայց զքեզերը կերակուրի պէս են . շատ ուտելը աղեկ չէ , հապա լաւ մարսել պէտք է :

Թ . Յիշէ որ միշտ Աստուած զքեզ կը տեսնայ , որուն քիչ ատենէն հաշիւ պիտի տաս ամէն գործոցդ և ամէն մոտ ծութեանցդ :

Ժ . Ասոնք են կամքերնիս ուղղադատ պահելու համար պէտք եղած նախազգուշութիւնները . բայց դժբաղգաբար թէ որ մեղանչես , ինչ պէտք է որ ընես : Լաւագոյն դեղը զջան է և առաջարել որ մէյմ'ալ նոյն սխալանաց մէջ չիյնաս . պակասութեանդ հակառակ աղեկութիւններ գործէ և ըրածներուդ գէշ հետեւանքներուն դարման ջանա ընել : Ունէ որ ուրիշին ընչիցը վնաս հասուցիր , ոչ միայն եղած վնասը հատուցանես՝ այլ նաև վաստըկելու դուռ մը բաց իրեն . մէկուն վրայ գէշ խօսեցար , ջանա չէ թէ միայն իր վրայ լսախօսելու՝ այլ ուրիշ ո՛ւ և իցէ մարդու վրայ ալ ըլլայ : Արմինդ մեղօք արտաւորեցիր , քու պատիւդ մէյմը մոածէ , և առաջադրէ առաքինութեան մէջ այնպէս զարդանալ՝ որչափ որ չար ախտովդ զքեզ նուաստացուցիր : Երանի քեզի որ այսպիսի կրօնքի մը մէջ ծնած ես որ չէ թէ միայն անմեղը կ'օրինէ , այլ և ապաշխարող մեղաւորին ալ՝ թեւերը բացած կը սպասէ և կ'ընդունի զինքը , երբ կը տեսնայ որ իր

յանցանքը խոստովանելով թողութիւն
կը խնդրէ :

ԻԳ.

Ապարէլագործէլ զայլս : — Ի՞սպէ-
սով կը կատարէլագործէս մարմինդ ,
միտքդ ու կամքդ . այլ աս միայն բա-
ւական չէ , հապա զուրիշներն ալ կա-
տարելագործէլու փոյթ պիտի ունե-
նաս : Ուրեմն ամենայն կերպով պիտի
զգուշանաս այն ամէն բաներէն որ ըն-
կերոջդ ցաւ կամ վնաս և կամ հիւան-
դութիւն մը կրնան պատճառել . լաւ
ու օգտակար խորհուրդներ տուր ա-
նոնց որ կարօտ են . իսկ բարի օրինակ
ամենուն : Դաստիարակութեան տա-
րածուելուն նպաստէ , զուրիշը մի տհա-
ճեցըներ , այլ ընդհակառակն ուրախա-
ցուր . ով որ առաքինութեան մէջ կը
դեղեի՝ զինքը քաջալերէ , պակասու-
թեան մը մէջ սահողը սիրողաբար ուղ-
ղէ , և քու գժկամակութիւնդ ցըցուր
ախտաւորներուն գէմ : Ա շտագնեալ-
ները միսիթարէ բարի գործքերով , եթէ
կրնաս , ապա թէ ոչ զոնէ խօսքով .
այսպէս ընելով ամենքն ալ կ'ըսեն , թէ
Ա-աքինի ու ժաղագակին նորդ է :

ԻԴ

Խրաշունք և պարտք սեպհականո-
թեան :

Ի՞յց ինչպէս կրնայի ես իմ վիճակս
լաւցընել թէ որ տէր ըըլլայի իմանձիս ,
ուղածիս պէս տնօրինելու իր վրայ . ինչ-
պէս կրնայի ապրիլ առանց յատուկ բան
մը ունենալու . ինչ ախորժ կրնայի ունե-
նալ ոչխար արածելու , երկիր մշակելու՝
երբ ուրիշներն անոնց պտուղը ինձմէ
յափրշտակեին . ինչպէս ընկերութեան
մը մէջ սիրով կրնայի կենալ թէ որ
յարդ ու պատիւ մը չունենայի . մարմի-
նը իմն է , աս կարասիքն իմն են , պա-
տիւն իմն է . և այս է որ կ'ըսուի իրա-
ռանք սէպհականութիւն , և ամենուն
զարտքն է ունեցածնին լաւ գործածել
և մեծարել յայլս զնոյն :

ԻԵ

Ա պհականութիւնն է վէրայ նորնոյ : —
Ուրեմն ոչ ոք զիս կրնայ ստիպել որ լոկ
իրեն հաճոյիցը համեմատ ծառայութի
մը ընեմ ընդդէմ կամացս և տուժիւք
հանդերձ . զարձեալ ոչ ոք կրնայ ան-
պատճառ տեղ զիս բռնել փակել , կամ
մարմնոյս վնաս մը հասցընել , և ոչ ըստ
իրեն հաճոյիցն և դիւրութեանը հա-
մար անբան անասունի մը պէս ծա-
ռայեցնել . միթէ Ի ստուած զամէնքնիս
ալ հաւասար չէ ստեղծած : Ի՞յց ես
մարմնոյս վրայ ունեցած իշխանութեանը
կը գեղծանիմ՝ թէ որ առողջութեանս
և կենացս վնասակար բաներ ընեմ ,
գիտնալով որ աս իրաւունքը ինծի տը-
րուած է միայն , իմեւ ուրիշներուն բա-
րոյն համար :

ԻԶ

Ա պհականութիւնն է վէրայ պատուայ : —
Եթէ մէկը յարգի ու մեծարելի է ու-
րիշներուն առջին , անով խիստ շատ հա-
ճոյք և իրական օգուտներ կրնայ ձեռք
ձգել . եթէ դուն զուրիշը զբարտես ,
գիտցիր որ գող ես ու կը յափրշտակես
իր հանգիստն ու վաստակը : Ի՞ու պա-
տիւդ մտածէ , յիշէ որ բնութեամբ ա-
մենուն հաւասար ես . մտածելուդ և
գործելուդ մէջ պատուաւոր համարձա-
կութիւն մը պէտք է ունենաս՝ բայց ա-
ռանց հպարտութեան՝ որով զայլս նա-
խատելով զքեզ ատելի կ'ընես . ինչպէս
գարձեալ հեռու պիտի կենաս վատա-
սրբտութենէ որ վատահութիւն չունե-
նալովդ քու անձիդ վրայ , չթողուր եր-
բէք որ արժանապայել բան մը մտածես
կամ գործես : Ուրիշներուն համարումն
ու մեծարանքը ստացիր և պահէ , այլ
առաքինութեամբ և իմաստութեամբ ,
և ոչ եթէ ծուռումուռ ձամբաներով .
կամ ուրիշները վար զարնելով և կամ
շողոքութեամբ : Պարծենկոտութենէ
այսինքն քու արդեանցդ վրայ սոնքալէն
զգուշացիր . վասն զի իրօք արդիւնք

ունեցողը խոնարհ կ'ըլլայ . դուն քու պարծենալովդ կը ստիպես որ ուրիշները զբեզ արհամարհէն . բայց ամէն բանէ աւելի փափիր լիրք անձնագովութենէ , այսինքն է ունեցած արդիւնքէդ վեր զբեզ գովելէն . գիտե՞ս ինչ բանի պէտք է փափաքիս . առաքինի ու քաղաքակիրթ անձի մը համբաւ ստանալու : Ուստի ով որ այս մասիս մէջ ուրիշի վրայ մուր մը կը քսէ , եթէ առանց պատճառի կ'ընէ այս բանս՝ ըսել է թէ անզգամ զրպարտիչ մի է . իսկ թէ ըսածը հիմ մը ունի , բայց հարկ մը չկայ ըսելու , ըսել է թէ ցած չարախօս մի է :

Պատիւը տղայութեան կը նմանի , մէյմ' որ կորսուի՛ ալ չես կրնար նորէն ձեռք ձգել : Ուրեմն ամենայն նախանձայուղութեամբ պէտք է որ պատույս վրայ հսկեմ , և անանկ բան մը չգործեմ որ կրնայ կորսուիլ . ուրիշի վրայ չարախօսելէն առաջ պէտք է լաւ մտածեմ , վասն զի որչափ որ դիւրին է վնասելը , այնչափ ալ գժուարին է եղած վնասուն դարման տանիլը . ինչ բարի բան որ ուրիշներուն վրայ լսեմ՝ յօժարութեամբ պէտք է որ հաւատամ , իսկ թէ չար լսեմ , պէտք չէ որ մէկէն հաւատամ , ինչուան որ շատ ապացոյներ ձեռքս չունենամ , և ան ատեն ալ պէտք է որ կարեկցիմ , լսեմ և ձեռքէս եկածն ընեմ չարն արգիլելու և ուղղելու համար :

ԻԵ

Աւոհականութիւն ընչեց : — Խըք դեռ աշխարհքիս բնակիչքը սակաւաթիւ էին , ամէնքը իբրև ստացուածք այն չափ տեղ միայն ունէին որչափ որ իրենց յատուկ օրական ապրուստին կը ընար բաւել , և ինչ պտուղ որ երկիրը կը բերէր և որսացած կենդանինին :

Ի՞սյո երկիրը միշտ պտուղ չը բերէր և ոչ ալ միշտ կարելի է որսորդութեան ելլալ . ուստի մարդիկ հարկ սեպեցին ապրելու համար աւելի ապահով կերպ մը մտածել , որով այլ և այլ կենդանին էր իրենց ընտանեցուցին , ինչպէս եղ ,

ոչխար , այծ , ձագար , խող , հաւ , սագ , բադ , աղաւնի զորոնք ժողվեցին ու պահանելով սնուցին , որպէս զի կաթը , միսը , բուրդն և հաւկիթը , և ահա այս կերպով սկըսաւ հովուական կամնահապետական կեանքը : Ի՞սյո նեղութիւն քաշելով՝ կենդանեաց ձարակ գտնելու համար ասդին անդին թափառելէն , սկսան երկիր մշակել , հերկել , սերմանել , հնձել , պտուղներ հասցընել և այդիներ տնկել . ան ատեն մարդիկ հաստատուն տեղ մը կեցան , հնձածնուն մէկ մասը ձմեռուան պահէլ սովորեցան , տուներ կառուցին , ջրոց հոսանքներուն ընթացքը կարգաւորեցին և ձամբաներ բացին . և ով որ դաշտ մը հերկեր էր՝ իրաւունք ալ ուներ անոր հունձքն իրեն և իր ընտանեացը պահէլու , այսինքն անոր տէր ըլլալ և մեռնելէն ետքն ալ նոյնը իրեն որդւոցը ժառանգութիւն թողուլ :

ԻԵ

Ճարտարութիւն : — Պարզ մշակութք միայն մարդս սեպհական ընչից տէր ըլլար . վասն զի՝ իրաց առեալ քանի մը տեսակ պտուղները , մէկալ մնացած բնութեան բերքերն անգործ են , այսինքն երկայն աշխատութեան կարօտ են որ զանոնք մեր պիտոյիցը համար կարենանք գործածել . ինչպէս օրինակի համար ըսենք կանեփը որ դաշտին մէջ կը բուսնի՝ այրելէ զատ ուրիշ բանի չկը նար ծառայել . երբոր հասունայ՝ մարդիկ կը քայլեն և որպէս զի թրմի ու կակըղնայ դաշտին վրայ կը թողուն կամ ջրի մէջ կը ձգեն . ետքը երբոր ցողուններն արեւուն մէջ լաւ մը կը չըրնան , կը սկսին ծեծել և անանկով կեղելը կ'իյնայ և կը մնան միայն թելերն առանց կեղեկի . վերջը ասիկայ կ'առնեն կը գգեն որպէս զի շիւղերն ու թանձր մասը բաժնուի ու բարակ և փափուկ մասը մնայ . ետքը կանայք աղեկատին վրայ կ'ոլորեն ու կը մանեն . մանուելէն վերջը ոստայնանկը կ'առնէ կը հիւսէ կտաւ կը շնէ . յետոյ ան կտաւէն սաւան և ուրիշ

որ և իցէ Ճերմակեղեններ կը շնուն :

Այս պատրաստութիւնները կամ թէ ըսենք աշխատութիւնս քիչ շատ ամէն բերքի հարկաւոր են, որուն Ճարդարութիւն կ'ըսենք . և ով որ այսպէս կ'ընէ վարձքն ալ կ'ընդունի : Անող կանայք, ոստայնանկն ու դերձակն իրենց աշխատած կանեփին վրայ սեպհականութիւն կը ստանան, հաւասար ան գեղացիին որ ցաներ ու հնձեր է :

ԻԹ

Այսէսոք: — Խրբ Ճարտարութիւն դեռ չէր զարգացած, ամէնքը ստիպուած էին ամէն բան իրենք իրենցմէ ընելու . երկիր հերկել ու մշակել եղեր է, բայ և մանգաղ պատրաստել, տներ շինելու համար փայտ կտրել ու զգեստ կարել եղեր է . վերջապէս ամէն բան : Բայց ասանկով մարդս չափէ դուրս կ'աշխատէր ու խիստ շատ բանի զբաղելով՝ բան մ'ալ չէր կրնար լաւ ընել . հազիւ թէ ժամանակ կը գտնար իրեն պիտոյքը լեցընելու, թող թէ արուեստից մէջ կատարելագործուելու, և աւելի քիչ՝ գիտութեանց ետևէ ըլլալու :

Վակայն հետզհետէ շատ մարդիկ այլ և այլարհեստներու ետևէ եղան . մէկը երկրագործութեան, մէկալը ձեռագործի, միւս մը կերակրեղինաց, ուրիշ մը զգեստուց և ագանելեաց, բնակարանի և իրենք զիրենք պաշտպանելու : Ա ասն զի ընկերութիւն մը որչափ աւելի բարկընայ այնչափ աւելի ալ աշխատութիւնները կը բաժնուին որով ամէնքը աւելի կը վաստըկին և աշխատութիւնն իսկ կը կատարելագործուի . որովհետեւ միշտ նոյն բանն ընելով մարդս նաև լաւ ընելու կը վարժի :

Այս է մէջերնիս եղած արհեստից բազմանալուն պատճառը որ հիմա կը տեսնաս . մէկն որ արուեստ մը ունի ձեռքը՝ իրաւամբ վարձք ալ կ'ընդունի, և տարակոյս չկայ որ վաստըկածին վրայ արդարապէս իշխանութիւն ունի :

Լ

|| աճառականութիւն : — Խմ դաշտս լաւ ցորեն կը բուսցընէ, քուկդ ալ խաղող . մէկ մաս մը ցորեն ես քեզի կուտամ, դուն ալ փոխադարձ գինիէդ մաս մը ինծի կուտաս որով երկուքնիս ալ թէ հաց կ'ունենանք և թէ ըմպելիք : || ոմ պարտիայէն շատ մետաքս կ'ելլայ, Դնուայէն ալ աղէկ ձէթ . ուստի || ոմ պարտացիք մետաքս կուտան ու Դնուացոյմէ տիկ տիկ ձէթ կ'առնուն :

Խս ոչխարներուս բուրդը կը կտրեմբայց մաքրելու կերպը չգիտնալով քեզի կը յանձնեմ որ մաքրես, գզես, մանես հիւսես և երկու վերարկու շինես, մէկն ինծի՝ մէկալը քեզի :

Այս փոխանակութիւնները վաճառականութեան ամենէն պարզ կերպերն են . դուն ալ նոյնը կ'ընէիր տղայութեանդ միջոց, երբոր ինսձորդ ընկերոջդ կուտայիր որպէս զի իրեն խաղալիքը քեզի տայ . հիմա իննձորին տեղ ստակ կը գործածես . վասն զի աս փոխանակութիւնները դիւրացնելու համար մարդիկ ստակը հնարեցին՝ որոնք մետաղի կտրուանքներ են որոշեալ ծանրութեամբ, ձեռվ ու նշանով, որոնք իրենց չափովն ամէն աշխատութեանց և որ և իցէ նիւթի արժէքին տեղ կը բռնեն . Ուէ որ ասուեղէնի կարօտութիւն ու նիմ, ստակը ձեռքս կ'ելլամ վաճառականին կ'երթամ արմարցընեմ և ինքն ալ ինծի կը ծախիէ : Աթէ հարկ է որ մէկը առանց պարտըկան ըլլալու ինծի ծառայէ, կայ կը խոստանամ իրեն . ուստի ինքը կը ծառայէ ինծի, ես ալ կը վճարէմ իրեն . ասուեղէնը ծախողն և ան ծառայութիւնն ընողը իրենց առած զնոյն և վարձքին վրայ սեպհականութեան իրաւունք մը կը ստանան . թէ որ ես այն ասուին առնելէս կամ ան ծառայութիւնն ընդունելէս եսքը խոստացածս չտամ, գող կ'ըլլամ . թէ որ վաճառականը վաճառքին որպիսութեանն և արժէքին մէջ զիս խաբելու

ըլլայ՝ ըրածը զողութիւն է . դարձեալ
գող է անիկայ որ ծառայողին աշխա-
տութեան համեմատ վարձք չտար :

I.Ա.

Եշնուական արհեստ . — **Ի**նկերութե
մէջ դեռ ուրիշ պարապմունքներ ալ
հարկաւոր են , ինչպէս բժիշկը զմեզ
առողջացընելու համար , փաստաբանը
մեր իրաւունքները պաշտպանելու հա-
մար , վարժապետը դաստիարակելու
համար , քահանան հաւատոյ կարևոր
բաները սովորեցընելու համար , դատա-
ւորը մէկուն իրաւունք ունենալը չունե-
նալը որոշելու համար , զինուորը մեր ա-
պահովութեան վրայ հսկելու համար ,
և այսպէս դեռ ուրիշ շատ զբաղմունք-
ներ ¹ . ասոնք բոլորն ալ ուրիշներուն
օգտին համար չեն մի աշխատիր . ու-
րեմն իրաւացի է որ վարձք մը ունենան :

կը շարունակոյ :

Միլտովն :

Ինազմավիպիս էջերը այս երրորդ ան-
գամուս **Ո**իլտովնի ընծայելնիս թերեւս
սմանց զարմանալի մը երենայ . բայց ո-
րովչետեւ ազգերնիս քիչ ատենէն հե-
ղինակիս անմահական ծանօթ երկասի-

1. Ասանկ կրնանք բաժնել ան ամէն զբաղ-
մունքները որոնցմով արհեստից և պարապմանց
մէջ սեպհականութիւն մը կը ստացուի : Արհեստ-
ներն իրեք դաս կը բաժնուին :

2. Անոնք որ բարեբերութեան ետևէ կ'ըլլան .
զոր օրինակ . Որս , Զկնորսութիւն , Երկրագոր-
ծութիւն և Հանքարանութիւն՝ այսինքն քարե-
րու , աղերու , գետանածուի և մետաղաց հանելուն
համար եղած աշխատութիւնները :

3. Պիտոյից , հանգստեան և հաճոյից համար
եղած արուեստները :

4. Վաճառականութիւն , որուն հետ կ'իմա-
ցուին ծախելը . փոխագրութիւնն և վճարելը :

Ազնուական արհեստ կամ պարապմունք շառաւած-
ներէն ոմանք չ'ուղղէն , ինչպէս կը թութիւն , Ի-
րաւագիտութիւն , Անդաշափութիւն և Հաշուե-
գրութիւն : Ոմանք ալ չ'օգնէն , ինչպէս բժշկու-
թիւն , Վերաբուժութիւն , Դեղագործութիւն :
Ոմանք ալ է սանչէն , ինչպէս Արդարութիւն և Զի-
նուորութիւն : Իսկ ասոնց ամենուն գերագոյն
գլուխն է կրօնքը իր պաշտօնեայներովք :

բութեանն՝ այսինքն **Դ**րախտ կորու-
սեալ **Ղ**իւցազներգութելը նոր թարգ-
մանութիւն մը պիտի ստանայ հայկա-
կան հին տաղաջափութեամբ՝ արդի ազ-
գային քերթողաց երևելագոյններէն
մէկու մը երկասիրութեամբը , ան պատ-
ճառաւ արժան համարեցանք որ այս
թարգմանութիւնը դեռ ՚ի լցո չըն-
ծայուած՝ հեղինակին վրայ ընդհանուր
տեսութիւն մը ընենք՝ աւելի **Ա** իլմէն
հոչակաւոր քննաբանին կարծեացը հե-
տեելով՝ որ ինչպէս ծանօթ է ամենուն՝
իր ուղիղ և անկողմնասէր դատմանը
համար շատ յարգ ունի ուսումնասիրաց
առջեւ : **Ե**ւ որովհետեւ այս նոր թարգ-
մանութիւնն տպագրութեամբ լցու տես-
նալու համար դեռ քանի մը համբերա-
տար ամսոց պէտք ունի , ան պատճա-
ռաւ ըստ պատշաճի քանի մը գեղեցիկ
հատուածներ ալ մէջ կը բերենք , որով
ատենէն առաջնաշակ մը տուած ըլլանք
այս նորահիւս թարգմանութեանս՝ բա-
նասէր և կիրթ ախորժակաց :

Հանձարը սրբնթաց ու ամենի գետի
կը նմանի որուն դիմացը որ և իցէ ար-
գելք չկրնար ընդդիմանալ՝ մանաւանդ
երբոր հարթ ու դիւրին ընթացք մը
գտնէ ձեռնտու իր աղբիւրէն անաշխատ
բղիսելու՝ ինչպէս է միտքը : **Ո**իլտովնի
գերաթոփէ հանձարը շատ կը յարմարի
այս օրինակիս , ևս առաւել երբոր ամ-
բողջ իր կենաց ընթացքը քննենք ուշի
ուշով , որովհետեւ մեծ հեղինակի մը
կեանքը շատ կապակցութիւն ունի իր
գրաւորական երկասիրութեանցը հետ:
Ոիլտովն՝ ինչպէս քաղաքական կենաց՝
այսպէս ալ իր քերթութեանցը մէջ բո-
լորովին նոր ասպարէզ մը բռնեց որ մեծ
հանձարի նշան է՝ մանաւանդ երբոր
աչք մը տանք իր **Դ**րախտ կորուսեալ
հրաշալի **Ղ**իւցազներգութեանն՝ որ ինչ-
պէս յայտնի է ամենուն , նիւթոյն նորու-
թիւնը գերազանց հանձարի մը կարօտ
էր որ զայն ՚ի գործ գնէր . և ինչպէս
Տանթէ նոյնպէս նաև **Ո**իլտովն գեր-
բնական և սովորականէ դուրս դէպք մը
նիւթ առած են իրենց որ բոլորովին ե-
րևակայութեան կամ թէ ըսենք հան-